


ՏԱՐԵՐԻ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

164. Բուսաբանական աշխարհագրությունն է այն մասն բուսաբանութեան, որ կը խօսի ամբողջ բուսոց՝ երկրիս այլ և այլ կողմն ինչ կերպով բաշխուած ըլլալուն վրայ, և թէ ինչ փոփոխութիւններ կը կրեն այլ և այլ ազդեցութեանց պատճառաւ. օրինակի համար Վերմութենէն, միջնդուրտին խառնակութենէն, լայնութեան աստիճանաց տարբերութենէն, և այլն: Կը ցուցընէ թէ որովք են լեռնային, դաշտային, ջրային, ծովային, ճախնային, բնականային և տաք երկրի թյսեր. կը ցուցընէ դարձեալ թէ ինչ նորանոր թյսեր կը գտնուին և



Ձև 220. Բրգաձև կաղամբ (Peuplier pyramidal).

Թէ որ երկիրներն աւելի ճոխ են ու յարմար բուսաբերութեան:

165. Հեղինակը բուսաբանական աշխարհագրութեան. — Ահա այս մասին ևս հիմնադիր կրնայ համարուիլ մեծահանճարն լինէնոս, որ սիրուն ու համառօտ ոճով մը աւանդած է զայն իր Լարոնիայ Մաղկացուցակ գրոց յառաջաբանին մէջ: Բայց իրմէ վերջը հետզհետէ աւելի կատարելագործեցին ու ճոխացուցին նախ Գուսնիֆոր, որ 'ի Հայաստան և 'ի Փոքր Ասիա ճանապարհորդելով՝ սիրուն կերպով կը նկարագրէ այն տեղեաց և 'ի մասնաւորի Այսրարատայ բուսաբերութիւնը. ապա Ալեքսանդր

Պրոպ Գ.

Հումպոլդ յԱմերիկա և յԱսիա ճանապարհորդելով երկայն ժամանակ՝ անթիւ ու նորանոր տեղեկութիւններ աւելցուց. Հուայնիւրդ գերմանացին կեդրոնական Ասիայ բուսաբերութիւնը 'ի լոյս բնծայեց. Հոքերդ Պրոպն և Ռիկարդ՝ Աստրախիոյ բուսոց վրայ ծանօթութիւններ տուին. իսկ Ալքիանոս Ժիւսիոյ, Կա-



Ձև 221. Գառնագմակ. — Joubarbe.

րոլոս Մարտինոս և Հոբեր՝ բարձրաբերձ լեռանց բուսաբերութեան վրայ աշխատելով՝ լրացուցին և ճոխացուցին բուսաբանական աշխարհագրութիւնը. և այսօրուան օրս իսկ շատունակ գիցագնական արշաւանք կ'ընեն ամէն ազգէ երկրիս անթափանց տեղուանքը, և միշտ նորանոր տեղեկութիւններ կ'ընձեռեն՝ ինչպէս ուրիշ ուսմանց՝ նոյնպէս և բուսաբանական աշխարհագրութեան:

166. Թիւ բուսոց. — Ամբողջ բուսոց թիւը՝ լինէնոս յամին 1733՝ կը հասցընէր 60000. Բերսոն յամին 1807՝ կը համբեր 26000. Ստենդէլ յամին 1824՝ կը հաշուէր 30000, և յամին 1834՝

մինչև 995000, որոց 80000 բլթակաւոր բոյսը էին, և 15000 անբլթակաւորք: Բլթակաւորաց մէջ 65000 երկարլթակը էին, և 15000 միարբլթակը. իսկ հիմա կը կարծուի թէ 120000 բլթակաւոր սոր Փանտոլ կը հասցընէ ամբողջ բուսոց թիւը մինչև 4-500000ի:

Յայտատեռ և գաղտատեռ բուսոց տեսակքն կը փոխուին ըստ լայնութեան աստիճանաց. որչափ դէպ 'ի հիւսիս յառաջենք՝ այնչափ աւելի կը շատնան անբլթակ բոյսը. իսկ բլթակաւորք կ'աճին դէպ 'ի հասարակածն: Բարեխառն կլամ ցուրտ գոտեաց տակ եղած բոյսերն փոքր են և հազիւ հազ գետնէն վեր կը բարձրանան: Իսկ ջերմ գոտեաց մէջ Մառաւտունի Պտերք, Սունկը, և Մամուռք ևս մեծապէս կը բարձրանան և մեծ ընդարձակութիւն կը զբաւեն:



ՁԷ 222. Լիբանտան. (Romarin).

168. Խոնաւորեան ազդեցութիւն բուսոց վրայ. — Շատ մեծ ազդեցութիւն ունի խոնաւութիւնն բուսոց վրայ, ժամանակի առանց հողոյն և մթնոլորտին խոնաւութեան՝ բուսական նորածին հիւստածքն խամրելով, բոյսը կը դանդաղեցնէ իր սննդաւական գործողութիւնը, կը թօշնի ու կը մեռնի: Տեղ տեղ անձրեւներն, ցօղն, ստորերկրեայ ջրոց մղումն և մէգն՝ բուսական կ'ըլլան պահելու բուսոց կաւրեւր գալարութիւնը. բայց շատ անգամ այս բնական պայմաններն անբաւական ըլլալով անտնօրինելի հարկ կը համարուի ոռոգումն գործածել, որ է արուեստական հնարք՝ հողուն խոնաւութիւնն տալ պտղաբեր ընելու համար: Եւ իրաւցընէ քիչ մշակութիւն կրնայ յաջողիլ առանց այս հնարից օգնութեան, և այն երկիրներն որ կ'ոռոգուին՝ միւս ամէն պայմանքն հաւասար ըլլալով, համեմատութեամբ շուտ



ՁԷ 223. Գետնաբաղնի (Lierre terrestre).



ՁԷ 224. Սկուտիլ (Spondyle).

167. Ջերմութեան ազդեցութիւն բուսոց վրայ. — Խրաքանչիւր տեսակ բոյս՝ առանձին ջերմութիւն կը պահանջէ, օրինակի համար. Կուենկը, Յարախը, և այլն, կը դիմանան -40° ցրտութեան, մինչդեռ Արմուենիք, Ալուեսաձուք, Ժաւատունի Պտերք՝ 10° ջերմութեամբ կը չորնան, Ալպեան և հիւսիսային բոյսը 10° ջերմութեամբ կը թռամին. իսկ Ափրիկէի տաք աւազներուն մէջ անոյ բոյսերն մինչև 60° և 72° ջերմութեան կը դիմանան: Կան բոյսը որ 0 աստիճանին կը բուսին, ինչպէս Ասպուզան, մինչդեռ Նարդիակենի և այրեցեալ գօտւոյն բոյսը՝ հազիւ 15° ի կամ 20° ի երկուսն ծիլի:

գեալ երկրի մը՝ կու տան կրկին, և առաջատիկ և քառապատիկ անգամ աւելի բերք:

Ուստի այն երկիրներն՝ որ յաճախ խոնաւութիւն կ'ընդունին անձրեւներէն կամ ոռոգմամբ, մասնաւորապէս յարմար կ'ըլլան մարգագետինի և լայնատերեւ բուսոց մշակութեան, որոնք բոլոր օրն արտաշնչելով մեծ քանակութեամբ ջուր, պէտք կ'ունենան համեմատաբար աւելի թարմ հողոյ:

169. Լուսոց ազդեցութիւն բուսոց վրայ. — Լոյսն ալ ոչ ինչ նուազ քան զխոնաւութիւն և զջերմութիւն՝ ազդեցութիւն ունի բուսաբերութեան վրայ, և ջերմութեան արդեանց

մաս մի՛ լուսոյ ազգեցութենէն յառաջ կու գայ: Ամենայն ոք գիտէ՝ որ մթութեան մէջ ապրող բոյսերն սպիտակ կ'ըլլան, վատոյժ, տկար, տժգոյն, նման այն կենդանեաց՝ որոնք խաւարի մէջ կը բնակին: Աւրեմն լոյսն ան տնօրինելի տարր մի է բուսոց կենաց, հաւասար այն տարերաց՝ որոց վրայ մինչև հիմա խօսեցանք: Աւստի այն ծառերն՝ որք թաւ անտառաց մէջ կը բուսանին ու կ'ապրին, գրեթէ ուղղածիգ կ'ամբառնան իրենց ճիւղերը, իսկ անոնք որ ազատ օդուն մէջ կ'ապրին՝ հորիզոնական կերպով կը տարածեն իրենց ճիւղերը, որպէս զի աւելի լոյս վայելեն: Ինչպէս նաև ջերմատան կամ սենեկաց մէջ մեծցած բոյսը՝ միշտ դէպ 'ի ոյն կողմը կը գիմեն՝ ուստի կարող են լոյս ընդունել:

ԲՈՒՍԱՐԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈՂՈՅՈՑ

170. Ամբողջ Եւրոպիոյ բուսաբերութիւնը կրնանք երեք մեծ մասսանց բաժնել, այսինքն են



225. Զրային Դահլիճ (Giroflée aquatique).

Հիւսիսային, Միջին և Հարաւային բուսաբերութիւն:

Բուսաբերութիւն Հիւսիսային Եւրոպիոյ. — Հիւսիսային գաւառաց բուսաբերութիւն կազմող՝ երկիրներն են Լաբորիա, Իսլանտա, Շուէտ, Նորուեկիա և վերին Ռուսաստան, որոց բուսաբերութիւնն այնչափ ճոխ չէ տեսաւ կօք. փայտային տեսակ բոյսերն՝ հազիւ հաս իրերերորդ մասն են հոն գտնուած բոլոր բու-

սոց. իսկ գաղտաստեղ շատ աւելի են համեմատութեամբ: Վերոյիշեալ տեղեաց մեծամեծ ծառերն են Կոնաբերբ, Կոյժփլայինք, Կաղնիք, բրգածե Կաղամախք (Չե 220) որոնք լայնութեան 60 բորոգ աստիճանին կանգ կ'առնուն. Հայկթ՝ 61 աստիճանին, Հոնարի, Կակ-



226. Զոֆոս (Gratiola).

դի 63 աստիճանին. Կոնաբերք՝ 67 աստիճանին. Գարի, Վարակ, և այլն, կրնան մշակուի մինչև 70°-ին: Սրբցարկ՝ Եւրոպիոյ ամենէն աւելի հիւսիսային կողմն, որ կը գտնուի լայնութեան 70°, 30' և 81° աստիճանաց մէջ, 93



227. Թաւրնիւկ արեւելան (Amaranthe orientale).

տեսակ յայտատեա բոյսը կը բովանդակէ, ինչպէս Սիգային, Խաչածեղ, Խառածաղիկք, Խաղիբաններ, Փարկասորուկ, Գառնաղմակ (Չե 221), և այլն:

171. Բուսաբերութիւն Միջին Եւրոպիոյ. — Եւ-

բուսական միջին բուսաբանական երկիրներն են՝ Միջին Ռուսաստան, Գերմանիա, Հոլանդիա, Պեդանիա, Չեխոսլովակիա, Գերմանիա, Վերին Ռուսիա և Գաղղիոյ մեծագոյն մասն։ Այս մասին բուսաբանութիւնն, զոր շատ դժուարին է մի առ մի յիշատակել, բոլորովին կը տարբերի նախընթաց գաւառացի բուսաբանութիւնէն։ Եւ յիշատի, եթէ դիտենք վերոյիշեալ աշխարհաց անտառները՝ կը տեսնենք որ ձևացեր են մեծաւ մասամբ զանազան կաղնեօք, թէպէտ և խառն ալ կը գտնուին Մարկալիքք, Հացիք, Կաղամախք, Կեննիք, Նշարիք, Լաստենիք, և այլն. այս ծառաց տերեւներն թօթափուելով ձմեռ ատեն՝ եղական տեղք մը կու տան այն անտառաց, իսկ եթէ արտորայքը դիտելու ըլլանք՝ կը տեսնենք որ բիշ շատ ամէն տեղ արմատաց տոճմին ամէն տեսակքն կրնան մշակուիլ,

ուստ են Եւրոպացեղք, Երթնաւորք. ինչպէս Սկուտի (Ձև 224), Վարդաձեք, Խառածաղիկք. կը գտնուին նաև Լատան, Կարմրաբեր կաղնիք, Սղոցիք, Կաղամախք, Ռուենիք, և այլն։ Այս մասն շատ անգամ ախորժելի և գեղեցիկ տեղք մը կ'ընծայէ իրեն հոտաւէտ Մըրտենեաց պուրակօք, Մատթգենեօք, և Թափաշէվարդիք։ Յիշատիա, 'ի Սիկիլիա և 'ի Սպանիա՝ Կիտրոնք, և Նարինջք գեղեցիկ ու հոտաւէտ ծաղկօք կը զարգարուին. կան Ափրիկէի բոյսեր ևս, ինչպէս՝ Ուլունտենի և Զարմուռնի, որոնք անթափանցելի մացառներ կը ձևացնեն. երևելի են անկաբեր Կաղնիք, Ժառատունկ Նընլան, Կենիստայ, Նոնիք, Զիթենիք, Իշիւրենիք, Երուին Դահլարակ (Ձև 225), Մոնիոլիոյք և մէկ երկու տեսակ Արմաւենիք, Զուլիա կամ Մշտիկ (Ձև 226), և այլն։

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍԻՏՑ


173. Ասիոյ ճոխ և ընդարձակ բուսաբանութիւն, որ շատ գերազանց է քան ՂԵՐՈՒԿԻՅՈՅ բուսաբանութիւնն, երեք մասանց կը բաժնենք. Հիւսիսային, Կեդրոնական և Հարաւային։



228. Սպիրեա.
(Spirée).



Ձև 229. Միլեպերտիս
(Millepertuis).



Ձև 230. Փոքր Դամպլիտակ։ (Petite Consoude).

Ինչպէս նաև Վարդաձեղք տոճն և զանազան պտղատու ծառեր. վերի կողմերուն ջրոյն Որթ և Թթենիք չեն դիմանար, ինչպէս նաև Եղիպատացորեն, և այլն։ Զարդի և բժշկական խոտք և բոյք անթիւ են, զորս և արուեստով բազմազնեցումը՝ անթիւ զանազանակներ յառաջ կու գան, ինչպէս Վարդաձեղք, Խառածաղկանց, Դահլարամիջ, Հիւրիկաց և Երթնաձեղք. կան ևս Լիբանոսական և Գետնաբաղեղ (Ձև 222, 223), և այլն։

173. Բուսաբանութիւն Հարաւային Եւրոպիոյ. — Հարաւային Եւրոպիոյ բուսաբանական երկիրներն են Յունաստան, Միջին և Հարաւային Իտալիա, Սպանիա, Բորգոնա, Եւրոպական Տաճկաստան, որոնց մէջ շատ ա-

Բուսաբանութիւն Հիւսիսային Ասիոյ. — Հիւսիսային բուսաբանութիւնը կազմող երկիրն է Սիպերիա, որուն բուսաբանութիւնն մէկ կողմանէ Եւրոպիոյ Հիւսիսային բուսաբանութեան նմանութիւն ունի, և միւս կողմանէ Միջինին հետ. բայց զլիսաւորապէս իրեն յատուկ տոճք են Ընդեղէնք, Թարնիակ արևելեան (Ձև 227), Խաչաձեք, Խառածաղիկք և Հովանոցաձեք. իսկ տեսակաց մէջ Խաչիբան, Փնդածաղիկ, Գար, Ապիրակ (Ձև 228)։ Սիպերիոյ անտառք ձևացած են Սիպերիոյ պտենեօք, Տարտուսան կոռնեօք, Սիպերիոյ Դոնեօք, և սպիտակ ու հոտաւէտ Կաղամախիք. կը գտնուին նաև խառն ուրիշ բուսաց հետ Սին, Լաստենիք, Ռուենիք և Մրտալարդք. Քաճաւարայի տա-

փաստանի ծաղկացուցակն նման է միլին էրու-
պիոյ արտաներու ծաղկացուցակին. կան կա-
կաք, Հիբիսք, Ուլինդր, և այլն: Հումպուդ՝ Ու-
րալ լեռանց անտառները՝ մեծ ծաղկազարդ և
ծառագարդ պարտիզի մը կը նմանցնէ, յորում
կը գտնուին շատ տեսակ խոտեր. թուփեր, ծա-
ռեր, ծաղիկներ և գեղեցիկ կանաչու թիւն մը.
և յիշատի այն բարձրաբերձ լեռանց զանազան
կողմերը կը գտնուին վայրի վարդենիք, Սայու-
րենիք, Գիհիք, էրեկորենայք, կապուտ Մրուան
տակ, Մկանաղիք (Ձև 239), փառաւոր Կու-
վացնծուք, Նրային Աւուդյա, փոքր Շամպղի-
տակ (Ձև 230), և այլն:



Ձև 231. Թէյի ծառ. (Arbre du Thé).

174. Բուսաբերութիւն Կեդրոնական Սիպիոյ. —
Ի Սիպիոյից եթէ փոխադրուինք 'ի Չինա-
ստան և 'ի Ճաբոն, պիտի հիանանք անտարա-
կոյ՝ տեսնելով մեծահասակ և փառաւոր տե-
րևազարդ և ծաղկալից Մանիլիայք, որոնց
մշակութիւնն արդ յէրոսպա ևս տարածուած
է. Կամելլեակք՝ որովք էրոսպիոյ մէջ տեղական
եղած են, և յառաջ կու գան ծաղկոցներու
մէջ, և որոց տեսակք և զանազանակք 700ի կը
հասնին. Թէյի ծառն (Ձև 231), որուն տերև-

ներէն 10 միլիոն հազարագրամ կը բերուի յԵւ-
րոպա տարուէ տարի: Բաց 'ի ասոնցմէ՝ զարդք
են և ճոխութիւնք այն աշխարհաց համար՝ գե-
ղեցիկ Արմառենիք, հոտաւէտ Սիթենիք՝ որոց
տերևները Թէյի հետ կը խառնեն հոտաւէտ
ընելու համար. մշտադաւար Ժանտափուք,
Սարդենիք, Տղիկք, Լատենիք: Սոնց հետ
մէկտեղ կը մշակուին նաև Բրինձ, Գորեն,
Գարի, Վարսակ, Հանար, Էգիպտացորեն, Կա-
ղամիի զանազան տեսակք, Գետնախնձոր,
Դեղձենիք, Ճարո՝ ի Զղեարենիք, Նարինջ,
Բողկ, Դդում, Վարունգ, Սեխ, Ախտոն, Ու-
լոռն, Լուրիս, Դուռն, Մաղկամորգ, Բակլա,
Կնճիթ կամ Սոսամն, Կանեփ, պապիրաբեր
Թիթենի, Բամբակենի, Նշենի, վայրի Կեռա-
սենի (Ձև 232), Մնեբեկ, Թգենի և Որթ-
ահա այսչափ ճոխ են Սիպիո կեդրոնական եր-
կիրներն, յորս յիշածներնէս դուրս՝ հազարաւոր
ուրիշ խոտի տեսակ բոյսեր, տունկեր, զանա-
զան թուփեր և մեծամեծ ծառեր կան:




Ձև 232. Վայրի Կեռաս: (Cereia sauvage).

175. Բուսաբերութիւն Հարաւային Սիպիոյ. —
Ի Չինաստանէն և 'ի Ճաբոնէն անցնելով 'ի
Հնդկաստան՝ կը տեսնենք որ վերոյիշեալ բոյ-
սերն կը սկսին նուազել և կամաց կամաց տեղիք
կու տան տաք երկրի բուսոց, որոց ցօղունն,
ուտքն, ծաղիկքն ու տերևքն՝ մեծ, լայն և փա-
ռաւոր են. հոս կը սկսին շատնալ մակաբոյժ և
պատաղիչ բոյսք: Հնդկաստան իրաւամբ կընայ
համարուիլ հայրենիք Համեմի տեսակ բուսոց.
և ահա հոս կը տեսնենք ճոխութեամբ և գեղե-
ցիկ կերպով մշտեկամ Մեխակք, Պղպեղի ծառ-

(ՉԼ 253), Պիստակենիք, Մըշկընկոյղք, Փուփաք, Գզմաստք, Բանանենիք, Խաչուէի ծառ, զանազան տեսակ Նարինիք, Լիմոններ, Բամբուկ, Դեղակի տունկ, Նշենի, Արմտիաց շատ տեսակք, և այլն: Հատ ճոխ է նաև կտրծր և շինուածոց փայտի տեսակք, ունի դարձեալ Կտկիթրակենի, Ալիակիա, Պատկառուկ, Կարտենիա, Ուրիազ՝ որոյ փայտն Հին աստենէ՝ ի վեր յարդի է, և այլ անթիւ տեսակք թանձր բուսոց:

ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՓՐԻԿԷՒ

176. Ափրիկէի ամրող էրկիրներն ևս Հանդերձ իր անապատներով և ուղտիններով եւ



ՉԼ 253. Եռա Պշպեղի: (Arbre du Poivre).

րեք մեծամեծ մասանց կը բաժնենք, այսինքն են Հիսթալյին, Արեցեալ և Հարաւային երկիրներ:

Բուսաբերութիւն Հիսթալյին Ափրիկէի. — Հիսթալյին յաւասարութիւնը կազմող երկիրներն են՝ Ափրիկէի ծովեզերեայ տեղումքն, զորս Միջերկրական կը շօղափէ, և մասնաւորապէս Ալճերի ալիարհն և Նիլոս գետէն առդեալ տեղումքն: Ասանց բուսաբերութիւնն Եւրոպիոյ հարաւային բուսաբերութեան հետ մեծ կապակցութիւն և նմանութիւն ունի: Ափրիկէի Հիսթալյին ստորին լեռնոտ գաւառաց մէջ շատ լաւ յառնող կու գոյ որթի մշակութիւնն, վասն զի այն բարձրաթեանց վրայ՝ զովութիւն մը կայ, որ երկրին ջրամութիւնը կը

մեղմէ. ուստի թէ տեղացիք և թէ ցաղթականք զանազան տեղեր կը մշակեն: Սակայն այս տեղեաց գլխաւոր ճոխութիւնք են Չիթենիք և մանուսանդ Արմուէնիք. կան նաև Միկարեր Կաղնիք, որովք մեծամեծ և թաւ անտառներ ձևացեր են, և Գաղղիացեաց ձեռքն են: Այս մասին մէջ գտնուած բուսոց տեսակքն 300ի կը հասնին, որոց մեծագոյն մասն տեւական բոյսեր են: Սահրայի անապատին մէջ եղած բուսոց գլխաւոր տոհմք են Բարդք, Խաչաձեք, Սէզք և Բնդեղէնք. իսկ փայտային տեսակաց մէջ Գզմաստ և Սարայեան Հերձի. կը գտնուին նաև ուխտիներու մէջ բաց յԱրմաւեանց՝ Թղենիք, Նշենիք, Միլանենիք և Որթք. լիբանց մօտ կըլած ուխտիներու մէջ կը



ՉԼ 254. Դաւապղպեղ: (Piment).

մշակուին Տանձիք, Խնձորենիք, Դեղձենիք, Սերկէլիք. տեղ տեղ ալ Կիտրոններ, Նարինջ և Չիթենիք. Գարի և մանաւանդ Յորեն՝ շատ քիչ կը գտնուի. իսկ Սիս, Խոտոր, Բակլա, Գազար, Կաղամբ, Դաւապղպեղ (ՉԼ 254), շատ առատ են. կայ նաև Կանեփ, Հինայ. իսկ Պատընձան և Պողթկ մշակուած են քանի մը պարսիկաց մէջ. նոյնպէս Դոտմի տեսակք և զանազանակք շատ կը գտնուին, Միսիստի տեսակաց մէջ հասարակը միայն կը մշակեն:

177. Բուսաբերութիւն Ալճերի Ափրիկէի. — Ափրիկէի հասարակածային բուսաբերութիւնն կատարեալ կերպով չէ քննուած մինչև հիմայ, օդոյն և տեղեաց մտառողը և փնտաւարը ըլլալուն պատճառաւ: Բայց քիչ շատ լին բոյ-

սեր որ ուրիշ հասարակածային երկիրներու մէջ
կը գտնուին, նոյն բոյներն հոս ալ կան, բայց
ծառացեայ վիճակի մէջ. զոր օրինակ Տրոնից
և Մուրլից տոհմերն: Այս մասին խոնար տե-
ղուանքը առատ են Բանաններուց տոհմն, Հա-
մեմուք, Պանդանգաց տոհմն, Պաուպաք,
Պրոմեյեայք, Նուիի տոհմն, քանի մը տեսակ
Հայուէք, մոտ Աբարբէք. կան նաև Ընդե-
դէնք, Բեւեկնիք, Ականթք, Կտրածի խոտ (Չև
235). Իսկ Արմաւենիք շատ գեղեցիկ են և յաղ-
թահաակ, որոց գլխաւոր տեսակն է Չիթարեր
Արմաւ, որուն պտուղն այնչափ ձիթոտ է՝ որ
պարզ մատով ճղմելով կը սկսի ձէթ հոսի-
կայ նաև գինեբեր Արմաւ, որ Սակու կը կո-
չուի: Պտերը և Եղիճենիք շատ քիչ են հոս. կը
մշակուին դարձեալ Մարացորեն, Բրինձ, զա-
նազան տեսակ Լուբիա, Խահուէի ծառ, Եա-
քարեղէգն, Բամբակները, Արծաթածառը,
Ծխախոտը և Գլմաստ:



Չև 235. Կտրածի խոտ: (Galiet).

178. Բուսաբերութիւն Հարաւային Ալիքիիի.
— Ալիքիիի հարաւային բուսաբանական եր-
կիրն է Բարեյուսոյ Գլուխն, որ իրաւամբ հայ-
րենիք կը համարուի Արազլակտոց տոհմին,
Խորդենեաց, Խալանջից և Հրիկաց, որոց շա-
տան Եւրոպիոյ ջերմանոցայ դարդը են: Չկայ
երկիր մը որ այնչափ Խալանջից տոհմին տեսակ
ներ ունենայ, ինչպէս Բարեյուսոյ Գլուխն. և
յիրաւի մինչեւ Եւրոպիոյ մէջ 3 կամ 6 տե-
սակ միայն քնական են և բացօթեայ տե-
ղուանք կը գտնուին, ի Բարեյուսոյ Գլուխն հա-
րիրաւոր տեսակներ կան, որոց բարձրութիւնն
մինչև 3 մէզրի կը հասնի. ասոնց տերւներն
քիչ կ'անին, ծաղիկնին շատ մեծ են, և գեղե-
ցիկ զոյներով: Կան դարձեալ Քուրիմ (Չև
236), Կլատիլք, Ասկէպիադք, Պանիան (Չև
237), Կատուաթաթն կամ Ճաղճղուկ, և

Եւրոպիոյ շատ տեսակ պտղատու ծառեր,
միայն խիտ և մեծամեծ անտառներ չկան:

ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅ

179. Բուսաբերութիւն Հիւսիսային Ամերի-
կոյ. — Հիւսիսային Ամերիկոյ բնեւոյցին բու-
սաբերութիւնն շատ նման է Եւրոպիոյ և Ասիոյ
մի և նոյն լայնութեան աստիճանին ստակ ե-
ղած բուսաբերութեան, որով զանց կրնանք ը-
նել. իսկ մնացած մասը կը բաժնենք երկու
գոտեայ, որոց մէկն կ'իջնէ մին
չև 36°, և կը կոչենք Հիւսիսային
գոտիք, և երկրորդն՝ լայնու-
թեան 36 և 50 աստիճանաց մէջ
եղած երկիրներն, զոր կը կո-
չենք Հարաւային գոտիք:

180. Հիւսիսային գոտեաց
մէջ ի է բարդից տոհմն, Ռուդ-
պէքեան, Ճառագայթածէք,
Գլարքեան, Անդրոմիդէք, Քաւ-
մի, որոնք ամէնքն ալ գեղեցիկ
բոյսեր են և պարտիզաց զարդը:
Ծառատունկ բոյսերէն Շոճէք,
Ելեկիք, Կուենիք, Գիհիք, շատ
տեսակ Ուռենիք, Կաղնիք,
Մաշկամիրք, Հաճարիք, Նը-
զարիք, Կնձնիք, Կաղամարիք,
Լատենիք, Յարասի, Հաղի,
Սօսիք, զանազան տեսակ Տըշ-
կիք, չաբարի Տըկի, Կակդի, Ըն-
կուգնիք, Ատեղատիկ (Չև
258), Ռօրիննի, Մոմարեր
ծառք, Հաղարջնիք՝ գեղեցիկ
ծաղկօք, Միփին, Մրտավարդք,
և դեռ ուրիշ անթիւ բոյսեր
կան, յորոց զանազան բնակիչք
կը շինեն. կան նաև շատ թու-
նաւոր բոյսեր:

181. Հիւսիսային Ամերիկոյ
հարաւային գոտեաց բուսաբե-
րութիւնն ունի ինչ ինչ նմանու-
թիւն այրեցեայ գոտեաց բուսոց
հետ. այս մասին մէջ ևս կան
Կայծիկայնոց տոհմին ամէն
ցեղի բոյսեր. քանի մը տեսակ Արմաւենիք,
Անուածաղիք, Պատարիք, Ռու-
րինենիք, Իսաւար Մանիլք, և տեղ տեղ ալ
շատ մեծղի Սունիք. կան առատապէս Եաբար-
եղէգն, Լեզակ, Բրինձ, Դաւարոյ (Չև 259),
Բամբակներ, Ծխախոտ, ռիով բանիւ Կակտե-
նեաց հայրենիք է, մանաւանդ Միսուրի և Մեք-
սիկոյ, որոց տեսակը են Ոպունտենիք, Փշա-
կակտենիք, Խնձորակակտենիք և Մոմայիք:

Մեքսիկոյ երեք բարձրաւանդակ ունի բուսա-



Չև 236.
Քուրիմ: Sorigbo.

բերութեան, ստորին, միջին և վերին: Ստորինն կը սկսի ձորերէն և դաշտերէն մինչև Կաղնեաց անտառները, և այս մասին մէջ են Սրմուռնիք, Քամրակենիք, Լեղակի տունիք, Շարարեղէզն, Խաչուէի ծառեր, և ուրիշ շատ պրեզեալ գօտւոյն պտղատու ծառեր: Միջին բարձրաւանդակն կը գտնուի ընդ մէջ 1000 և 2630 մէդր բարձրութեան, և կը սկսի Կաղնեաց անտառներէն՝ մինչև Կոնարեր ծառոց անտառներն. և այս բարձրութեան մէջ կը հա-

սուննան դարձեալ սյրեցեալ գօտւոյն ծառոց պտուղներն: Իսկ վերին բարձրաւանդակն է ընդ մէջ Եղեւնեաց և մլտնիկնաւոր ձեանց սահմանը. բայց այս տեղուանքն ևս կը հասունանան Խնձորենիք, Տանձիք, Սերկեպիք, Կեռասենիք և Գետնախնձորք:

182. Բուսաշէրտոյրիւն Հարաւային Ամերիկոյ. — Նախ և առաջ աչք մը տալով Լըլանոս առաւամբ կողուած Հասարակապետութեան առաջին երկիրներու բուսաբերութեան, կը տես-



Ձև 237. Պանխան (Banyan).

նենք իբրև անեղր ծով մը վրէժխիւք և Լօռովք բեցուն, և յառաջ երթալով կը հանդիպինք և կը տեսնենք աստ անդ Սիգային բոյսը, Պատկառուկ, Աղաւարտ (Ձև 240), Մորոշք, Առուլոյտ, Թրմուզք, Արմաւենիք, յորոց զինի, ձէթ և հիւստածոց նիւթեր կը հանեն տեղացիք: Սակայն տեղ տեղ ինչպէս 'ի Գարադաս, որուն կլիման շատ անգամ իբրև մլտնիկնաւոր դարուն համարուած է, սքանչելի և բարեբեր բուսաբերութիւն մը կայ. այս քանիս պատահառն է իրեն միջին բարեխառնութիւնն, որ ցորեկ ատեն 16° և 20° է, իսկ դիւրը 16° և 18°. ուստի ամենայն դիւրութեամբ յառաջ կու-

գան Պանան, Խաչուէի ծառն, Նարինջք, Խնձորենիք, Ծիրանենիք, Յորեն, և այլն: Բայց Գարադասի յատուկ բոյսը են գեղեցիկահոտ Արեւադէմ կամ Վանիլիա, հնդիկ Մեխակ, կէտադրեալ Ճենողկազակ, Թարմիակ Գարադասի, Ուռենի հումպոլդեան, մոխրագոյն Ինկա, պերճ Ինկա, Քաբաս, Կաթնածառ, Աղաւնիճ և Մկնականձ, որուն փղերիկ ծաղիկն՝ մէկտեղը դեղին են և եղերքը կապոյտ (Ձև 241):

Հարաւային Ամերիկոյ բուսաբերութիւնը լաւ քննելու համար, պէտք է իրեն մեծ դիւ, կոյս և փառաւոր անտառները տեսնել. զոր օրինակ

Կուայանայի հրաշայի անտառները, որոց մէջ խառն կը գտնուին Սիզալտեակ բոյսը, Թխա-
բի բանք, որոց պտուղքն փորժահամ և քաղցր՝
ճաշակողին բերանը կը սեղընեն. Խաչուենի (Չև



Ձև 238. Աստեզատիկ. (Astrance).

242) գեղեցիկ Արմաւենիք, Կոկոռասեռք և շատ
տեսակ Վիանք՝ իրենց այլանդակ ձևովն և ծաղ-
կանց գեղեցիկ գոյներով՝ կը գերազանցեն քան
զայն ծառերը, որոց վրայ պլլուելով՝ կը բար-



Ձև 259. Դաւաբայ. (Cornouiller).

ձրանան և նորահրաշ կերպարանք մը կ'ընծայեն
անտառաց: Օրինակի համար Մօրա կոչուած
չքնաղ պտուտաւին, որ Ակաթիայի տոհմին
տեսակ ժ'է, իր միջնագոյն և տերևոտ ճիւղե-
րով ծառերէն ալ վեր կը բարձրանայ Կուայա-

նայի անտառաց յիծերու և առուակաց զարդք
են իրային Շուշաններ և մասնաւորապէս Վիկ-
տորիա Թագուհւոյ անուամբ կոչուածն, որոնք
այնպէս գեղեցիկ կը ծաղկին, որ բոլոր իրոյն



Ձև 240. Ազաւարթաւ. (Spergule).

երեւոր իրենց սպիտակ և մեծ ծաղկամբք ու սի-
րուն լայն և հոխ տերեւք կը ծածկեն: Ասկէ
վերջը կու գայ Հնդկաց Սիննապալի ըսուած
հակայածն դափնին, որուն փայտէն նաւերու



Ձև 241. Միոսկանջ. (Myosotis).

տախտակ կը շինեն: Վայրի որթն՝ որ այն տե-
ղի քնակչաց մալուխն կրնայ ըսուիլ, պարու-
րածն կը պատէ ամենէն բարձր ծառոց բունն
այ, յետոյ անոնց գագաթէն վար կ'իջնէ չուա-
նի փունջի մը պէս ոլորուած և մէջէ մէջ ան-

ցած. Հոն նորէն արմատ կը ձգէ, նորէն կը փաթթուի ու կը կապկըպէ ծառերը, և այն կողմերու ահագին փոթորկաց դէմ կը պաշտպանէ, ինչպէս ծովու մէջ ձգած խարխալն կամ մայուխն գնալը: Սմենայն ինչ մեծ կերպարանք ունի այս անտառաց մէջ, ամէնն զիրար կը սղմեն, իրարու վրայ կը դիգուին, վեր կը ձգուին, չորս զին կը տարածուին լոյս փրն տուելով. ամենեւին փոքր բան մը չկայ հոն, ընդ մէջ հսկայ ծառոց կոճեղաց ոչ տեղ կայ, ոչ լոյս. շերտի շերտ ոչ մաքառ, ոչ մամուռ, և ոչ քարաքոս. հագիւ երբեմն ճեղք մը կը գտնէ արեն իրեն ճառագայթները շողացնելու և նոր հրաշալի տեսարան մը բանալու համար:



Չէ 242. Խաչուենի . — Caféier.

183. Որչափ ալ գեղեցիկ և զարմանալի ըլլան Արաբիայի անտառներն և բուսարկուծ թիւնն, սակայն Պրագիլի բուսաբերութեան և անտառաց գեղեցկութեան չեն հասնիր. 'ի Պրագիլ լի են յարգի և ազնիւ փայտի տեսակ ծառեր, որոնք կը գործածուին թէ շինուածոց համար, թէ զարդոց և կահլիարասեաց համար և թէ 'ի ներկարարութեան: Այսն հոս վերայի շէտ ամէն ծառերն, իսկ իւր յատուկ բոյսը են Մանիովի՝ յորմէ հաց կը շինեն կասառ անուամբ, Անանասներ Մանգլ կոչուած, որ լրարբի տեղուանք կը սիրէ, խիտ անտառներ կը ձևա-

ցընէ, պայծառ ջրոց վրայ կամարած և արմատներ ձգելով, և իրեն թէ ցիցերու վրայ հաստատուած ըլլար՝ կոճղն այն արմատոց կամարներէն դուրս կ'ելլէ և իր թաւ տերեւները աղաւտարար յօշտ կը տարածէ: Նոյնպէս կան նաև Պրոմելիա, Պատուտալի Պրագիլի, մեծամեծ Պտերք, Վերոնիքա (Չէ 243), Մրտենիք, և այլն:

Քիլիի բուսաբերութիւնն ևս ըստ բաւականի ճոխ է. հոս կը գտնուին նոր երկու տեսակ Արմաւենիք, Արաւիկ՝ որ 50 մէդր ուղիղ կը բարձրանայ, փշոտ տերեւք և որուն սերմն կ'ուտուի: Այսն նաև տոճ Սիզից, Պտերք, Շեր-



Չէ 243. Վերոնիքա . — Veronique.

Թնաւորք, Հովանոցաձեւք, Սարգենեաց թուփք, բայց գլխաւորապէս սիրուն զարդ է սպիտակ Հարսնամատն, որ իւր գեղեցիկ և ճոխ ծաղկը և տերեւք ջրոց երեսը կը ծածանի (Չէ 244):

Բարակուայի անտառաց մէջ, որ դեռ այնչափ ծանօթ չէ, կան շատ ծառացեալ բարդի տեսակ բոյսք, և մանաւանդ հարաւային Սմերիկոյ Մաթէյ, որ նման է Չինաց և Ճաբոնի թէյին, յորմէ տարուէ տարի 3,600,000, լիպրէ կը համուի:

Արգենտինայի Հասարակապետութեան մէջ 300 տեսակ բոյս կան: Իսկ Բադախոնիոյ հարաւային երկիրներու մէջ կան քանի մը Սիզիցի


բոյսը, մթին և կաշեայ Շոճիք, Մոյկածաղիկ, Մորենի, Մամուռք և Փարսբուք:

Հարաւային Ամերիկոյ Հարաւային բուսաբե-
րութիւնն, նման է բեւեռային բուսաբերու-
թեան, յորում կը գտնուին աստ անդ Հացիք,
Յարասիք, Հաղարջենիք, և դիսաւոր բոյսը են
Սունիք, Լոսք, Փարսբուք, Հոսիսոյք, և այլն:

ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՆՍՏՐԱԼԻՈՅ ԿԱՄ ՈՎԿԻԱՆԻՍՏԻ

184. Աւստրալիոյ բուսաբերութիւնն շատ
տարբեր է մինչև հիմա տեսած ուրիշ երկրներն:

բուսաբերութենէն, և աւելի Երրորդակ
Դարու բուսոց նմանութիւն ունի քան թէ այժ-
մեան. նոյն իսկ այն բոյսերն՝ որք ծանօթ են և
ուրիշ երկրներու մէջ ալ կը գտնուին, հոս փո-
խուած են թէ՛ դիրքով, թէ՛ մեծութեամբ և թէ՛
ծաղկանց տեսքով: Այս ընդարձակ աշխարհիս
բուսոց կէտը կը կազմեն Եւրասիոյ բուսներն, որ
շատ լաւ յատկութիւն ունին և արդ յԵւրո-
պա կը գործածուին օգը մաքրելու համար,
մանաւանդ Էնրմոտ տեղեր. Մրտենեաց տոհմին
կը պատկանին, շատ դիմացկուն, բարձր և
մեծ կակ տերեւներով են. շատ առատ է նաև Ա-



ՁԷ 244. Սպիտակ Հարամաման. — Nénufar blanc.

կասիա ընդեղինաց տոհմէն: Բաց ասոնցմէ
կան նաև Պատկառուկ պարզ տերեւք, Ահա-
ուէ (ՁԷ 243), 120 տեսակ Շանձուք, Փասնդա-
մու՝ որ շատ հաստ բնով է, նեղ, երկայն և զը-
ծային տերեւք, որոց միջէն ցօղուն մը կը բար-
ձրանայ պարուրաձև ծաղկօք վերջացած. ունի
դարձեալ շատ տեսակ գեղեցիկ Ընդեղէնք,
որոնք այժմ սիրուն զարդք են Եւրոպիոյ ճոխ
Էնրմանոցայ:

Նոր ԶԷլմանա մեր հակոտնեայն ըլլալով՝

Թերևս կարծուի թէ մի և նոյն տեսակ բոյսեր
ունենայ. սակայն ոչ, և մանաւանդ բարբովին
կը տարբերի մեր բուսաբերութենէն: Դրանա-
մաւի մեծ կղզւոյն մէջ ընդարձակ անտառներ
կան, յորս լի են Պատաղիչք, պտղատու ծա-
ռեր, Կանթապտուղք, Արտօսրաթոր ծառեր,
Դառնազմակ, Վերո՛հրա, Պատկատակ, Կը-
նիւն, Խառածաղիկ դառն: Պտեղք բոլոր բու-
սոց եօթներորդ մասն են. միաբլթակք են Սի-
զային բոյսեր և Շոճիք. իսկ երկաթթակք են՝

Հովանոցաձև և խաչաձև: Նոր Զելանդացի
յատուկ բոյսերէն մէկն է Փորմիոն, զոր Եւրո-
պացիք կոչեցին Նոր Զելանդացի կանեփ:

ՀՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

185. Ինչպէս որ մեր աշխարհն զարմանալի

է գրիւք և իրաւամբ բարձր օգուէտ լեռ-
նակղզի կոչուած է, նոյնպէս զարմանալի է
ու միանգամայն գեղեցիկ այս լեռնակղզւոյս
բուսաբերութիւնն, որ 'ի հնուց հետէ հիացու-
ցեր է զճանապարհորդս և կը հիացընէ մինչև
ցարդ շատ ուսումնասէր բնագէտս, երկրաբանս
և բուսաբանս, իւր առատ և բարդաւաճ ծաղ-



Ձև 245. Ահաուէ: (Ahaouai).

կացուցակօք, որով կրնայ յիրաւի մրցիլ զա-
նազան տեսակօք, գեղեցկութեան և առա-
տութեան կողմանէ: Եւրոպիոյ և ուրիշ աշ-
խարհաց բնական բուսաբերութեան հետ:


Առ այս մեծապէս նպատառ՝ են նախ՝ այլ

և այլ հրաշալի դարատափք և լայնանիստ լեռ-
նաղաւթք, որոնց մեծագոյն մասն՝ ծովու ե-
րեսէն 1624 մէդրէն 2898 մէդր բարձր է. եր-
կորո՞ք մեր երկրիս բնական կազմութիւնն ու
մթնոլորտի հանգամանքն ևս մեծ ազդեցութիւն

ունեցած են և ունին արդ ևս բուսոց առատութեան և զանազանութեան վրայ, երբորդ՝ զիրաւորութիւն ու ջերմութիւն պահող հրաբխային սև քարեր, որովք լին է մեր ամբողջ երկիրն, շատ պարարտ ու բերրի հող դառնալով՝ կը սնուցանեն ու յառաջ կը բերեն դոյսս, չորրորդ զգալի կերպով կ'օգնեն մեր երկրին՝ շատ գետեր, վտակներ, աղբերք և առուակք, որոնք լաւայից մէջէն բղխելով, մէկ կողմանէ նոյն քարերը չարունակ կը փխրեն ու ընտրի հող կը դարձնեն, և միւս կողմանէ այն սև գետնայն

վրայ ազդած ջերմութեան դէմ հարկաւոր եղած խոնաւութիւնը կը մատակարարեն: Միով բանիւ մեր աշխարհի ճոխ բուսաբերութեան մեծապէս կ'օգնեն նաև մասնաւոր արուեստով եղած սուգունք, յորում շատ քաջ է Հայ ազգն ըստ խոստովանութեան նոյն իսկ Վակների:

Արդ այս գեղեցիկ Լեւնակղզւոյս ամբողջ տարածութիւնն ըլլալով 120000 մշոն՝ ընդ մէջ 57°, 40' և 41°, 50' լայնութեան աստիճանաց, ըստ նիքեոն հարաւային Եւրոպիոյ բուսաբերութիւնը պիտի ունենար ըստ ամենայնի. սա,




ՉԼ 246. Խոզկաղնի: (Gland).

կայն կը տեսնենք որ եթէ ոչ բոլորովին, այլ շատ կը զարտուղի իր բուսաբերութեամբն, որուն պատճառն է իր բարձր դիրքն ու մեծամեծ լեռանց պարեր ունենալն: Ուստի բոլոր Հայաստանի բուսաբերութիւնը երեք մասանց կը բաժնենք, այսինքն են Հարաւային կամ Դաշտային բուսաբերութիւն, Միջին կամ Բլրային բուսաբերութիւն, Հիւսիսային կամ Բարձրաբերձ լեռանց բուսաբերութիւն:

186. Հաշտային Բուսաբերութիւն Հայաստանի. — Հարաւային բուսաբանական երկիրներ անոնք են, որոց բարձրութիւնն ծովուն

երեսէն ինչուան 1000 մէդրի կը հասնի. ինչպէս գետեզերեայ տեղուանք, ճախճախտաք, ծովեզերք և գեղեցիկ կանաչազարդ դաշտորայք, և բլուրք. և ահա այսպիսի տեղուանքը սովորաբար միջին Եւրոպիոյ ծառերն ու թփերն կը տեսնուին՝ գրեթէ միշտ կանաչազարդ: Այս ծառոց զխաւորներն են Տօսախ, Դափնի, Մրտենի, Չիթենի, Բաղեղ, Փշարմա և Չար. խոտի տեսակ ըոյսեր: Ասոնցմէ վեր կը տեսնուին Խոզկաղնի (ՉԼ 246), Ուխի, Թեղօշ, պոնտական Լեւնակաւորք, Միփին. իսկ դեռ աւելի վեր կու գան Դոնիք և Թփանման Ուխի:

ուրիշ անթիւ տեսակ բուսոց հետ: Առնցմէ զատ 'ի զանազան տեղիս ինչպէս 'ի Կիւրիս, 'ի Մեղրի, յՕրտուպատ, 'ի Հայոց Միջագետս, 'ի Սինիս, 'ի Կախիկէան, յԵրևան, 'ի Տիարպէքեր, յԱրտաշան, յՕթի, 'ի դաշտորոյս և առ ստորոտս Ալլարատայ՝ կը գտնուին Ա-



Ձև 247. Բոգ. (Gentiane).

փութ ծաղկաւէտ, Տերեփուկ զանազան տեսակ, Մեղուածաղիկ փոքր և մեծ, Փշական, դառ նրբաբլիթ, Պատատուկ զծային, Գրբուժ գեղեցկագոյն, Շահոգրամ Սեաւ կամ վայրի Ոլոռն, Երինճնակ երկնիւղ, Եւնոմիա սրտաձև, Արարիոն փշոտ, արևելեան, մեղմ և կարծր, Ֆարսետիա, Աւաղուկ սիգատերև, Թագաւորապակ հայկական, Հոռոմ երնյան

կովկասեան, Օձաղեղ խալաձև, Գունդեփա դուռնեփորեան, Գաճի գեղանի, Գաղար, Բզնածարիր, Լուաղեղ պարզ, Յուրինայ գեղապէշ, Եղինճամայր երկայնածաղիկ, Մեղրածոժ, Անանուխ սեաւ և երկայնատերև, Մշուհի լեռնային, Կատուախոտ տոգոյն, Պորտնուկ պոնտական, Շանձուք սեաւ, Չուրակ կլորատերև, Շնախատոր երկատերև, Թևփէկ հասարակ, Մեկոն հայկական, Ոլլաղեղ սեաւ կարմրեփեպ, Լայքուհի Եղեմուտ, Շուճի պոնտական, Սէզ կոճղիգուոր, Կանթաքերիկ հայկական, Կաղնի երկայնատերև, Փքնի հայկական, Եղեմալակ հայկական, Օշնան հազարտերեան, Խոտոր սիգային, Աղուխաձև, Եղեզն, Եղնակողիկ կլորատերև և Բոզ գեղին (Ձև 247), որ լեռանց անմայկ հոգեբուն վրայ բուսած գեղեցիկ Թիերէն մէկն է, բազմաթիւ գեղին ծաղկօք, ուղիղ ցօղնով, ձուանք և ամբողջ տերևք. ասոր տեսակը շատ են և կը գտնուին նաև 'ի Պիրենեանս, յԱլպեանս և այլուր. նաև բժշկութիւն մէջ շատ գործածական է:

Այս ամէն ծառերէն, ծաղիկներէն և խոտերէն զատ կը գտնուին 'ի կողմանս Թորթուժու, մայ, Արտաշանայ, Կաղզուանայ, Երզնկայ, Սանդ, Բալուսայ, Վանայ, Երևանու՝ ընտիր պտուղք, որ օրինակ Շիթք, Խնձոր, Տանձ, Դեղձ, Դուռն, Սիս, Չմերուկ, և Թուփ, որով և չերամի որդը կը դարմանեն: Եղնպէս շատ անուանի են զինիք Սանդ, Մշու, Արդնու, Երզնկայ և Երևանու, յորում միայն հարիւրաւոր տեսակ խաղող կայ, և որոյ այգետանիք՝ յիրաւի հրաշատես բուրաստանք են: Նմանապէս Գանձակայ կողմերը՝ տաք կլիմայիք բոյսեր կը գտնուին առատապէս և անպակաս են Եղնիւրենիք, Զիթենիք և Թղենիք: Շատ ընդարձակ անտառներ չկան 'ի Հայաստան, բայց բոլորովին ալ զտրկ չէ, ինչպէս կան 'ի կողմանս Խաղտեաց, 'ի Սօղանլու լեռինս, ընդ մէջ Տայոց և Արարատայ, 'ի Գուգարս, և 'ի Մոկս:

187. Միջին կամ Բարային Բառաբերութիւն Հայաստանի. — Հայաստանի Միջին բուսաբերութիւն կազմող երկիրներ զանոնք կը համարինք, որոց բարձրութիւնն 1000 մէդրէն մինչև 2500 մէդրի կը հասնի, ինչպէս Մշո գաւառն, յորում յառաջ կու գան Վարդենիք, Լօրտակ, Ալոճ, Ուռենիք, Հարնամալու, Չնծաղիկ, Դեղին անթառամ, Մանտակ, Բողկ, Ագաւսքեղ, Կարոս, Ալաժահրի, Տղիկ, Նորգենի, Հացի, Գարահայրի, Մալի, Կաղաման, Թեղօշ, և այլն: Ի Բասեն կան տեսակ տեսակ Եղեմիք, Շահիք, Թեղօշիք, որոնք մեծամեծ անտառներ կը ձևացընեն, յորոց Օսմանեան և Ռուսաց տէրութիւնք փայտ կը կտրեն 'ի պէտս շինութեանց և վառելու: Ի Բաղէշ կը գտնուին 'ի

ստորին կողմանս Զիթենիք, Օղին խոտ, Ման-
տակ, Չնծաղիկ, Սպիտակուկ բանջար, Սունկ,
Խաւարծիլ, Աղբրաց արիւն, Նարգէս, Ծխա-
խոտ՝ որ շատ ընտիր է: Վանայ բլրոց և գաղ-
տաց մէջ կը բուսնին Փլատենիք, Սիգատեսակ
բոյւք, Վարդաձիք, Գինեբերք, Թիթենիք, Մա-
նուկալք: Դուռնըփոր անուանի բուսաքնին գաղ-
ղիացի ուղեւորն, որ ճանապարհորդէց յԱրե-
ւելս, 'ի 15 յուլիսի 1701 թ. անցնելով Շիրակաւա-

նէն և Փերկիտէն, կը գտնէ Փեննունս և Փղե-
նիկ բոյսերը զորս քրքմագոյն և գեղեցկագոյն
'ի բոյսս Արևելից կը համարի: Կարնոյ գաւա-
ռին բլրոց և լեռնահովտաց վրայ յառաջ կու
գան տեղ տեղ Գարի, Յարեն, Կաղամախ,
Աղբրաց արիւն, Լօյտակ, Կապուտակ շուշան,
Գնդածաղիկ, Խալիաշ, Կռուինշ, Արեգնիճ,
Փլումոս, և զանազան տոճմք ևս: Նմանապէս
'ի Բարբերդ, 'ի Գաւառն Արտաշու, 'ի Պայէ-



Ձև 248. Կաւն սահունակ. (Acantho):

գիտ, 'ի Շիրակ, 'ի դաշտն Ճորոխայ, 'ի լեռ-
նահովիտս Սեանայ, և 'ի զանազան տեղիս կը
գտնուին քիչ շատ փեննունս արևելեան: Կ-
ծոժ հայկական և գեղանի, Հաղարտերեւան
աղնուական, Խարի արևելեան, Խասոր, Ա-
ղունսաձետ դաշտային, Վառվառուկ, Երի-
ցուկ ներկարարաց, Լաստենի ձուռն, Մար-
դամարօտ արևելեան, տխուր, ասուեայ,

ձուռտերեւ, Երէշ, Խաղիրան՝ որուն 70 տես-
կէն աւելի կան, Կանթեղնիճ՝ որուն 20 տեսակը
կան 'ի զանազան տեղիս և բարձրութեանց վը-
րայ. Տերեփուկ եփրատական և ուր 34 տե-
սակը, Մեղուածաղիկ փոքր, Փլականգառ
փոքր, որուն 18 տեսակը կան, Ալէոմէ Թռչնա-
ճիւ, Մունակ գեղաղէշ, հայկական, Դափնիք,
Շահողրամ բաղմանիւղ, հայկական Կոտեմն,

Երևանի քաղաքի քաղաքային 17 տեսակը կը գտնուի յայլ և յայլ տեղիս, Եղերգ, որուն տեսակէն 16 էն աւելի կան. Կառն ստեղծական (Ձև 248), ղինճամայր հայկական, սպիտակ, Կտաւատ Երևանի քաղաքային՝ որուն 9 տեսակը կը գտնուին. Մեղրածուծ փոքրատերեւ, Անանուխ հայկական, Մշկունի, Արեւսկի հայկական, Նեղատերեւ և ուրիշ 7 տեսակը ևս կը գտնուին, Արեւաշուրջ մեծածաղիկ, Երեկորնիկ հայկական, և ուրիշ 7 տեսակը, Կոկուկ հայկական,



Ձև 249. Խաղիքան. (Astragale).

Գիհի բազմապտուղ, Յուրինակ կարճաբուն, գեղաղէշ, Կատուխտտ, Կաղնի լիբանանու, Խառածաղիկ իրային, հայկական, և ուրիշ 13 տեսակը կան, Գոմնիկ, Եղեսպակ, Օշնան, Քարկոտրուկ, և այլն:

188. Հիւսիսային Բոսաբերուրիւն Հայաստանի. — Հիւսիսային բուսաբերութիւն կազմող երկիրներ կրնանք համարել այն լեռնաքիւղ ու բոնց բարձրութիւնն է 2500 էն մինչև 4300 մէդր, ինչպէս Սոփաշու լեռինը, Աւատաղ, Կապոյտ

լեռան, Պինկէօլ, Սաւալան, Արագած, Փոքր Մասիս և Մեծ Մասիս. որոնց բուսաբերութիւնն իրաւցընէ նորորիկանկ և հրաշալի է. և մինչդեռ Եւրոպիոյ բեւոպային բուսաբերութիւնն գրեթէ անբիթակ ու հազիւ քանի մը տեսակ միաբիթակ և երկաբիթակ բոյսերէ կը բաղկանայ, Հայաստանի հիւսիսային և կամ բեւոպային բուսաբերութիւնն մեծաւ մասամբ Եւրկաբիթակ և Միաբիթակ բուսուկը կը կազմուի. և այս ևս է գարմանալի որ Եւրոպիոյ բարձրագոյն լեռանց բուսոց վերջին սահմանն է 3500 մէդր, մինչդեռ Արարատայ վրայ մինչև 4222 մէդրի կը հասնի: Եւ ահա ցածագոյնէն ըսկսելով կը հանդիպինք Մարդամարտ ձուստեր և Թեք-Տաղ՝ 2562-3249 մէդր բարձրութեամբ. Թեք-Տաղ՝ 2500՝. Գիհի յԱրարատ 2597՝, Թխտնի սպիտակ 2662՝, մինչդեռ ի լեռինս Եւրոպիոյ 2000 մէդրի կը հասնի. Դնախատի լեռինս Սպերոյ 2600՝, Սէգ՝ 2600՝. Թազաւորապակ 2625՝. Սիսի Պինկէօլ-Տաղ 2800-3400՝. Կակալ լեռնային յԱրարատ և յայլ լեռինս 2925՝, Մշկունի նոյնպէս՝ 2928՝, Մկնախ ամենաւատ և սիրուն կերպով կը ծաղկի վերայիցալ լեռանց վրայ 2927 մէդր բարձրութեամբ. Կոծած 3248-3897՝, Կանկէօլի 3300-3400՝, Արեւսկի 2923-3400՝, Չամբու, Յունապի 3248-3837, Սիւտաղի, Մրուանտակ երկու տեսակ 2923-3249, Աւաղիկ ալպետան և հայկական 2397-3500՝. Օձաղեղ երկու տեսակ 2923-3200՝, Ուլաղեղ ալպարատան, հայկական 2597-3200՝, Վերնիգա, Ճիւրիկ ոլիմպական 2800-3500, Գառնաղմակիկ, Առույտ, Կտրածի խոտ, և այլն, վերայիցալ լեռանց վրայ սիրուն կերպով կ'անին 2800-3400 մէդր բարձր: Արարատայ վրայ, ինչպէս նաև յԱրագած՝ կը տեսնուին զարձեւալ Քարկոտրուկ երեք տեսակ, Բզրուկ, Անթեմ, Աւագուկ, Խաղիքան (Ձև 249), Տերեփուկ, և այլն՝ 3248-4222 մէդր՝ և մինչև Արարատայ ձեռնց վերջին սահմանը՝ որ է 4320 մէդր, կը գտնուին ինչ ինչ խոտք և քարաբոյս: Ահա այսպիսի է մեր երկրին բուսաբերութիւնն, և դեռ Հազարաւոր բոյսք և խոտի տեսակ բոյսեր ևս կը գտնուին, զորս աւելորդ կը համարուի այս դասագրքիս մէջ անցընելէ: Վերջ

Հ. ՀԱՐԱՐԱՏԱՅ ՍԱՓԱՐԵԱՆ

